ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի մարտի 10-ին և 12-ին Վեհարանում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո, տեղի ունեցան Գերագույն Հոգևոր Խորհրդի հաջորդական երկու լիագումար նիստեր, որոնց մասնակցում էին նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի արտասահմանյան անդամներ՝ ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը, ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը և Փարիզի Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցչական ժողովի ատենապետ պրն. Արմեն Բարսեղյանը: Քաղաքից բացակայելու պատճառով նիստերին ներկա չէին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ Տ. Սիոն արքեպս. Մանուկյանը և պրն. Գրիգոր Խանջյանը:

Նիստերի ընթացքում քննարկվեցին մի շարք կարևոր հարցեր, որոնք նախատեսվում են առաջիկա Եպիսկոպոսաց ժողովի օրակարգի վրա դրվելու համար:

Որոշվեց 1988 թվականի աշնանը Ամենայն Հայոց կաթողիկոսի հրավերով Մայր Աթոռում գումարել Եպիսկոպոսաց ժողով:

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները այս առթիվ Ս. Էջմիածնի Մայր տաճարում ներկա եղան Մեծի Պահոց Արևագալի և Հսկման արարողություններին և հոգևոր ճեմարանի հարկի տակ կազմակերպված գրական-գեղարվեստական երեկոյին՝ նվիրված արևմտահայ բանաստեղծությանը: Երևանում նրանք այցելեցին մի շարք մշակութային կենտրոններ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
14 մարտի 1987 թ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՎ
ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌՋԵՎ

(12 մարտ 1987 թ.)

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԵՏԵՐԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԺՈՂՈՎԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
(1950 թ. օգոստոս)

ԶԱԽԻՑ ԱՋ՝
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻ՝ ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ.
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ ՉՈՐԵՔՉՅԱՆ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.
Ե. ՇԱՀԱԶԻԶ՝ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ.
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԱԼԻՍՏՐԱՏ՝ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ։